№ 29 ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 11 1889 ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 11 № 29

ՏԱՍՆ ԵՒ ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում զրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
Իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

Հանգուցեալ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՊԱԼԱՍԱՆԵԱՆՑԻ *աշակերտները հրաւիրում են հանգուցեալի բարեկամներին, ծանօթներին և նրա յիշատակը յարգողներին՝ շնորհ բերել ամսիս 12-ին, կիրակի օրը, ժամը 11-ին, վանքի մայր-եկեղեցին հոգեհանգստեանը։* 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

*Թիֆլիսի փոխադարձ կրեդիտի ընկերութեան ընտրութիւնները.—*ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. *Ներքին լուրեր.—*ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. *Արհեստագիտական ուսում տարրական և միջնակարգ դպրոցներում. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—*ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ՖԵԼԻԵՏՕՆ.

ԹԻՖԼԻՍԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԿՐԷԴԻՏԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—

Մինչև այժմ մենք կատարեալ լռութիւն ենք պահպանել Թիֆլիսի փոխադարձ կրէդիտի ընկերութեան դիրեկտորի ընտրութեան մասին, որը կատարվելու է ամսիս 19-ին, կիրակի օրը, և այսուհետև էլ դիտաւորութիւն չունենք մասնակցել այդ ընտրութիւնների առիթով կատարվող ագիտացիային։

Մենք գործ չունենք անձնաւորութիւնների հետ, որովհետև նախ՝ սկզբունքով մեզ համար մի և նոյն է ով կը լինի այդ ընկերութեան դիրեկտոր, իսկ երկրորդ՝ մեզ անհնարին էլ է ճշդութեամբ իմանալ և կշռել սրա կամ՝ նրա արժանաւորութիւնը ու պակասութիւնը։ Այդ մասին թող դատեն իրանք ընկերութեան անդամները, որոնց աւելի մօտ ծանօթ կարող է լինել այս կամ այն անձնաւորութիւնը, որոնց աւելի յայտնի կարող են լինել սրա կամ նրա պակասութիւններն ու առաւելութիւնները։

Մեզ կարող է հետաքրքրել միմիայն ընկղբունքը, ընկերութեան կազմակերպութիւնը, նրա կանոնադրութեան պակասաւոր կողմերը,—և ոչ թէ անձնաւորութիւնը։

Ծիծաղելի կը լինէր, եթէ փոխադարձ կրէդիտի ընկերութեան անդամները մամուլից սպասէին, որ սա ղեկավարի նրանց իրանց ընտրութիւնների մէջ.... Նրանք իրանք շատ լաւ են ճանաչում այն մարդկանց, որոնք գործում են ընկերութեան մէջ, իրանք էլ հետաքրքրված են գործով, իրանք կապված են ընկերութեան հետ իրանց նիւթական շահերով։ Նրանց համար գործին գլուխ կանգնած անձնաւորութեան ինչ լինելը ունի մեծ նշանակութիւն, քանի որ փոխադարձ կրէդիտի ընկերութիւնը հիմնված է անդամների փոխադարձ երաշխաւորութեան վրա, և անդամներից իւրաքանչիւրը պատասխանատու է ընկերութեան իր ամբողջ կարողութեամբ, իր բոլոր կայքերով, իր բոլոր նիւթական միջոցներով։

Զգոյշ լինել, հեռատես լինել ընկերութեան վարիչների ընտրութեան մէջ,—ընկերութեան անդամների գործն է։ Ընկերութեան անդամներին աւելի լաւ ծանօթ են անձնաւորութիւնները, իրանց բոլոր արժանաւորութիւններով կամ պակասութիւններով։ Նրանք իրանց նիւթական շահը աչքի առջև ունենալով, աւելի միջոց ունեն ծանօթ լինել ընկերութեան գործերի հետ, ընկերութեան այժմեան վարիչների բռնած ընթացքի հետ, կշռել մարդկանց արժանաւորութիւնն ու պակասութիւնը և մանրակրկիտ կերպով քննել թէ ինչ տեսակ անձնաւորութիւններ բարոյապէս աւելի հաստատ զրաւական են ներկայացնում ամբողջ ընկերութեան գոյութիւնը և ընկերութեան անդամների նիւթական շահերը ապահովացնելու համար։

Թողնելով ընկերութեան անդամներին անձնաւորութիւնների որոշելը, մամուլը կարող է հետաքրքրվել փոխադարձ կրէդիտի ընկերութեան, որպէս հասարակաց հիմնարկութեան, միայն ընդհանուր կազմակերպութեան հարցով և նրա կանոնադրութեան պակասաւոր կողմերով։

Մեր կարծիքով նոյն իսկ ընկերութեան կազմակերպութեան և նրա կանոնադրութեան մէջ կան խոշոր պակասութիւններ, որոնցից բաւական կը լինի յիշել երկու ամենախոշորները, քանի որ դրանց միջոցով ընկերութեան վարիչները կարող են միշտ ի չար գործ դնել իրանց օյժը։

Ընկերութեան վարչութեան ներկայացուցիչները չը պէտք է իրաւունք ունենային ընկերութեան մէջ կրէդիտ ունենալու և ընտրութիւնների ժամանակ բանկի թէ վարչութեան անդամները և թէ ծառայողները չը պէտք է քուէարկութեան իրաւունք ունենային։

Բայց դա սկզբունքի և ժամանակի հարց է, որը չէ վերաբերում առաջիկայ ընտրութիւններին, քանի որ կանոնադրութեան պակասաւոր կողմերը կարելի կը լինի փոփոխել, ընկերութեան անդամների ցանկութեամբ, և բարձր իշխանութեան թոյլատրութեամբ, միմիայն ընտրութիւններից յետոյ։

Իսկ ինչ վերաբերում է անձնաւորութիւնների ընտրութեան, մենք դարձեալ կրկնում ենք, որ կատարելապէս ծիծաղելի կը լինէր, եթէ ընկերութեան անդամները, որոնցից մեծ մասը քաղաքիս վաճառականներից են բաղկացած, մամուլից սպասէին ցուցմունք և ղեկավարութիւն անձանց ընտրութեան վերաբերմամբ։

Ոչ ոքին „անձինք“ այդքան լաւ յայտնի չը պիտի լինեն, որքան այն մարդկանց, որոնք անդադար շփվում են նրանց հետ և որոնց հետ նրանք միշտ կապված են եղել իրանց նիւթական շահերով։

Գ. Ա.

ԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երէկ, Թիֆլիսում վախճանվեց Պետրոս Շանշեան։ *Հանգուցեալը արդէն եօթանասուն տարեկանից անց էր։ Շանշեան բաւական մեծ դեր կատարեց թէ Թիֆլիսում և թէ գաւառներում, մանաւանդ Շուշիում, գլխաւորապէս դպրոցական ասպարիզում, մինչև վերջին տարիները։ Դրանից յետոյ հանգուցեալը բոլորովին հեռանալով հասարակական ասպարիզից սկսեց առանձնացած կեանք վարել, ապրելով Թիֆլիսի մօտիկ մի գիւղում և վարելով բաւական աղքատ կեանք։ Մի քանի օր սրանից առաջ միայն նրան տեղափոխեցին Թիֆլիս, ուր և նա վախճանվեց։ Պետրոս Շանշեան իր ժամանակին հանդիսացել է իբրև մի խումբ գործիչների պարագլուխ և ղեկավար։*

—

Կ. Պոլսից մի մասնաւոր նամակով մեզ գրում են, որ այս օրերս Երուսաղէմի Յարութիւն պատրիարքը կայսերական պալատը գնալով, Երուսաղէմի պարքի առիթով մի աղերսագիր ներկայացրեց Թիւրքաց սուլթանին։ Ինչպէս երևում է մեզ ուղարկած տեղեկութիւններից, սուլթանը հրամայել է՝ «շուտով կարգադրել այդ խնդիրը»։ Այդպիսի աղերսագրեր շատ են ներկայացված, և այդպիսի հրամաններ շատ տրված,—բայց, տարաբաղդաբար, մինչև այժմ Երուսաղէմի պարքը գոյութիւն ունի և աճում է.... մէջտեղ միայն Հայաստանի խեղճ ժողովուրդը տուժեց, որից այդ նպատակով հաւաքած փողերը մինչև այժմ էլ իրանց նպատակին չեն գործադրվել։

—

Ներկայ 1889 թ-ին հրատարակվեց Պետերբուրգում պրոֆէսսոր Վ. Մոդէստովի «О Франціи» (Ֆրանսիայի մասին) գիրքը։ Դա Ֆրանսիայի մասին հեղինակի առանձին-առանձին յօդուածների ժողովածու է, որոնք առաջ տպված են եղել ռուսաց այլ և այլ պարբերական հրատարակու-

---

ՖԵԼԻԵՏՕՆ

Գարունն եկաւ.—Երկու օրիորդների տիպեր.—Ապագայի տիպը և աշխատանքը.—Մարդու և կնոջ հաւասարութիւն.—Գարնան օդը և Մուշտայիդ այգին.—Մեր քաղաքակրթութեան էմբլէմը.—Մեր թուլութիւնները.—Մեր կեանքի ծայրայեղութիւններն ու հակասութիւնները.—Քաղաքակրթութեան հետևանքները և փողոցների կեղտը.—Մօդային հագուստները և կատաղած շները.—Բժշկական ընկերութիւն և վարակիչ ցաւեր.—Ռուսական հաստատութիւնները և տգիտութիւնն ու արբեցողութիւնը.—Հասարակաց կարծիքը և զեղծումները.—Ներսիսեան դպրոցի տեսչական հարցը.—Դատարկ ֆրազներ և կեղծաւորութիւն.—Մեզ ինչ տեսակ մարդիկ են հարկաւոր.

—

Ցուրտ ձմեռը, ձիւնը, անձրևը, ցեխը այդ բոլորն անցաւ....

Գարունն եկաւ. արեգակը նորից սկսեց ամենքիս տաքացնել իր բարերար ճառագայթներով։

Ձմեռ ժամանակ հազիւ կարելի էր հանդիպել զբօսնողներին քաղաքի փողոցներում.... Փողոց դուրս եկողը՝ շտապում էր շուտով անցնել, իր գործին գնալ։

Գարունն եկաւ և ահա փողոցները կենդանութիւն ստացան. ամենքը՝ կին, մարդ թէ երեխայ այլ ևս ոչ թէ շտապով են անցնում փողոցում, միմեանց վրա ուշադրութիւն անգամ չը դարձնելով,—այլ զբօսնում են բառի բուն նշանակութեամբ։

***

Ահա մի պառաւ մարդ նստել է բուլվարի նստարանի վրա և տաքանում է արեգակի տակ։ Ահա երիտասարդների մի խումբ անցնում ու դարձ է անում գլխաւոր փողոցով։ Նրանք բարձրաձայն ծիծաղելով, խօսելով, անցնողներին դիտելով՝ յետ ու առաջ են զբօսնում փողոցով։ Ահա մի օրիորդ, օգտվելով մեղմ եղանակից, իր մօր՝ ուղեկցութեամբ, դուրս է եկել փողոցը իր ամենագեղեցիկ զգեստները հագած, որպէս զի իր չքեղ հագուստով, իր գեղեցկութեամբ գրաւէ, շլացնէ մարդկանց, իր վրա ուշադրութիւն դարձնէ.... Ո՞վ դիտէ, գուցէ և փեսացու էլ գտնէ իր համար.... Նա աղքատ է, բայց այնպէս է հագնված, կարծես թէ քաղաքի ամենահարուստ ընտանիքի աղջիկը լինէր....

Նրան հարկաւոր է մի ունևոր ամուսին, որովհետև նա ինքն ոչինչ չունի. Նրա ծնողները իրանց վերջին կոպէկներն են ծախսել, շատ անգամ պարտք են առել, որպէս զի իրանց աղջիկը գեղեցիկ, լաւ հագնված, սիրուն, յափշտակիչ երևայ ու կարողանայ մի փոքր ի շատէ ունևոր, ապահոված մարդու գրաւել, լինի այդ մարդը երիտասարդ թէ ծեր,—մի և նոյն է։ Ծնողները այդպիսով իրանց աղջկան հրապարակապէս հանդէս են դնում.... Դա մի տեսակ վաճառք է, ծախու ապրանք է։

Ահա մի ուրիշ աղջիկ էլ անցնում է մեր առջև. Նա հպարտ կերպով է անցնում.... Նա հարուստ է, Նրա հայրը թողել է նրան մեծ ժառանգութիւն. Նրան հարկաւոր չէ փնտռել ունևոր, ապահովված փեսացու, նա ինքն փող ունի, և համոզված է որ կարող է, երբ էլ ուզենայ, իր փողով իր համար մի ամուսին ճարել....

Եթէ ուզենայ,—իր փողով կարող է նոյն իսկ իշխանի տիտղոսով մի ամուսին առնել, ուրեմն ինքն էլ իշխանուհի դառնալ....

Առաջինը պէտք է զուգվի, զարդարվի, գեղեցիկ երևայ, որպէս զի դուր գայ, որպէս զի իրան առնեն....

Երկրորդը ինքնաբաւական դէմքով անցնում է մեր առջև.... Նա զգալ է տալիս, որ ոչքին դուր գալու կարիք չունի, քանի որ իր փողով ինքն կարող է, երբ էլ ուզենայ, իր համար առնել մի մարդացու....

Ահա մեր օրիորդների այդ երկու տիպերը, որոնց կարելի է կարճ կերպով պատկերացնել, կամ գծագրել հետևեալ խօսքերով.

Ժրպիտը երեսին
Տուրնիրը ետևից,—
Փնտռում է փեսացուին՝
Օժիտ չունեցողներից։
Իսկ միւսը ինքն ունի
Քանի մի հազարներ....
Փնտռում է իշխանի
Թէև աղքատ լինէր....
Մէկի ճակատին
Գրոշմված է «ծախվում եմ»,
Միւսի ճակատին՝
«Ես ինքս առնում եմ»։

***

Այդ երկու տեսակ օրիորդներից ոչ մէկը չէ կարող մեր իդէալը լինել.... Ես ոչ նրան եմ կարող յարգել, որը առանց սիրելու իր անձը ծախում է ունևոր ամուսնուն, ոչ էլ նրան, որը փող ունենալով, նմանապէս առանց սիրելու՝ առնում է իր համար մի մարդացու....

Յարգանքի արժանի կը լինի միայն այն աղջիկը, որը իր աշխատանքով կապրի, որը ոչ կը ծախվի, ոչ էլ ինքն կառնի....

Սա միայն իրաւունք կունենայ ճշմարիտ հրապարտ լինել։

Եւ եթէ նա մի օր կը պսակվի,—նա կը պսակվի միայն այն ժամանակ, երբ ճշմարիտ կը սիրէ և այնպիսի մի երիտասարդի հետ, որը նոյնպէս իր աշխատանքով է ապրում։

Դա է մարդու և կնոջ իսկական հաւասարութիւնը։

Բայց այդ տեսակ ապագայ հաճելի չէ խաւարասէրներին և անբարոյական մարդկանց. Նրանք սարսափում են մտածելով որ կինը՝ արհեստ, փեշակ սովորած լինելով, մասնագէտ դարձած լինելով, այլ ևս խաղալիք չի լինի իրանց ձեռքում, բայց կը լինի մարդուն հաւասար, կատարեալ և իրաւատէր քաղաքացի....

Այդ է պատճառը, որ կնոջ անկախութեան խաւար թշնամիները սարսափելի աղաղակներ են սկսում արձակել, հէնց որ խօսք է ընկնում կնոջ անկախ դիրքի, ուրեմն և անկախ աշխատանքի մասին, հէնց որ այն միտքն էք սկսում յայտնել, թէ կնոջ համար, ինչպէս և տղամարդու համար՝ բաւական չէ լոկ վերացական, կեանքի մէջ անգործադրելի ուսումը, այլ երկուսին էլ, որպէս պատուաճանաչ և պարտաճանաչ քաղաքացիներին, հարկաւոր է մի որ և է գործ իմանալ՝ իրանց անձնական աշխատանքով իրանց կտոր հացը ճարելու և երկրիս վրա ապրելու համար։

***

Գարունը հասաւ և Թիֆլիսի բնակիչները ձգտում են մաքուր օդ ծծել, զբօսնել,—բայց տեղ չունեն, որտեղ օդ շնչեն։

Միակ տեղը Մուշտայիդ այգին է,—բայց դա էլ հետզհետէ փչանում, ոչնչանում է։

Այդիում այս բոպէիս նոր-նոր շինութիւններ

թիւնների մէջ։ Հեղինակը համոզվելով որ անցեալ 1888 թուին իր հրատարակած «О Германіи» (Գերմանիայի մասին) գիրքը, որը նոյնպէս նրա առանձին յօդուածների ժողովածու է՝ աջողութիւն ունեցաւ և լաւ ընդունելութիւն գտաւ ընթերցող հասարակութեան մէջ, վստահացել է ներկայ թուին հրատարակել և իր յօդուածների ժողովածուն Ֆրանսիայի մասին։ Առաջին գրքի գինն է՝ 1 ր. 50 կ., իսկ Ֆրանսիայի մասին՝ 1 ռուբլի 75 կոպէկ։ Երկու գրքերն էլ մեծ հետաքրքրութեամբ են կարդացվում։

—

«Հիւսիսային գործակալութիւնը» հեռագրում է մեզ Պետերբուրգից, որ պետական խորհուրդը որոշել է բարձրացնել փոստային մի քանի եկամուտները։ Միջազգային նամակագրութեան մէջ 5 սանտիմը կը հաշվի 2 կոպէկ, փաթեթների համար կը վճարվի 5 կոպէկ ֆունտից, 500 վերստի համար, իսկ 500 վերստից աւելի տարածութեան համար՝ 10 կոպէկ ֆունտից։

—

Խերսոնեան նահանգական զէմստվոյի յանձնաժողովը, հացի առուտուրը բարւոքելու համար՝ որոշեց կառուցանել զէմստվոյի էլէվատորներ հացի արտահանութեան կէտերում, այն է Օդէսայում և Նիկոլաեվում, նոյնպէս և այն տեղերում, ուր երկրի ներսից բերվում են հացահատիկները, այսինքն երկաթուղիների կայարաններում և գետերի նաւամատոյցներում։ Բացի սրանից նահանգական զէմստվոյի յանձնաժողովը յանձնարարեց զէմստվոյի վարչութեան նախագահին՝ պարզել կառավարութեանը հարաւային Ռուսաստանի հացի առևտրին նպաստելու համար՝ էլէվատորներ կառուցանելու անհրաժեշտութիւնը։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մեզ գրում են. «Թեմական առաջնորդի կարգադրութեան համաձայն, ամսիս 5-ին, գործակալ քահանայի հրաւիրագրով, Ախալցխայի հայ հասարակութիւնը հաւաքվելով, ընտրելու է երեսուն պատգամաւորներ, իսկ վերջինները պիտի ընտրեն չորս հոգաբարձու մեր երկսեռ դպրոցների համար։ Հին հոգաբարձութեան պաշտօնավարութեան եռամեայ շրջանը այս տարի լրանում է։ Սրբազան առաջնորդի կողմից այդպիսի շուտափոյթ կարգադրութիւնը մեծ համակրութեամբ ընդունվեցաւ ախալցխացիներից»։

—

ՀԻՆ-ԶՈՒՂԱՑԻՑ մեզ գրում են. «Առաջին անգամն էր որ Հին-Զուղայում Վարդանանց տօնի օրը ներկայացում տրվեցաւ. ներկայացրին «Վարդանանց պատերազմը», և «Կռուի-Կռուի» այստեղի միդասեան արական ուսումնարանի օգտին։ Ուսումնարանի դահլիճը լի էր ժողովրդով. վարագույրը բացվելուն պէս ամբողջ ժողովուրդը, ներկայացում տեսած չը լինելով՝ ապշած մնաց։ Կեցցէներին և ծափահարութիւններին չափ չը կար։ Ներկայացման վերջում, երբ երևեցան բեմի վրա զէյթունցու հագուստով ու երգեցին զէյթունցի մարշը, և մի քանի ուրիշ երգեր, ժողովուրդը խնդրեց, որ միւս օրը ևս ներկայացնեն կանանց և օրիորդների համար, քանի որ մեր գիւղի կանայքը և օրիորդները սովորութիւն չունեն մարդկանց հետ միասին նստել և թրեսները բաց անել աղամարդկանց մօտ։ Միւս օրը երեկոյեան արդէն կանայք և օրիորդները լցվել էին ուսումնարանի դահլիճում. ներկայացման գլուխ բերողը գլխաւորապէս ուսուցիչ Տէր-Աբրահամեանն էր։»

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Մարտի 3-ին, ուրբաթ երեկոյեան, պ. Աբէլեանց հայ սիրողների մասնակցութեամբ մի ներկայացում տուեց բարեգործական նպատակով։ Խաղացին «Զոհի փոխարէն զոհ» և «Էս էլ քի մօղիքլութիւն» պիէսաները։ Պ. Աբելեան, որը լաւ կատարեց իր դերը, ստացաւ տեղիս ռէալական դպրոցի հայ ուսանողներից մի ընծայ։ Լաւ խաղացին նմանապէս տիկ. Արղումանեան և պ. Տէր-Գասպարեանց։ Շուտով կը խաղան և «Աղասի» ողբերգութիւնը յօգուտ Շամախու օրիորդաց ուսումնարանի»։

—

Մեզ ուղարկված է Թաւրիզից մի վիմագիր տետրակ, որը կրում է «Բողոք» վերնագիրը, և վիմագրված է ներկայ 1889 թուականին։ Տետրակի մի խումբ հրատարակողները դրանով բողոքում են Ատրպատականի և յատկապէս Թաւրիզի եկեղեցական և դպրոցական շրջանում կատարվող զեղծումների դէմ։ Թաւրիզից մենք անդադար ստանում ենք թէ թղթակցութիւններ, թէ մասնաւոր նամակներ և թէ նոյն իսկ հաւաքական գրութիւններ այդ զեղծումները գործող հերոսների դէմ,—սակայն անկարող ենք հրատարակել այդ գրութիւնները։ Հրապարակ դուրս բերել հասարակական ամեն տեսակ զեղծումները, անխնայ կերպով հարուածել հասարակութեան իրաւունքի վրա բռնացողներին, հալածել իրանց կոչման անարժան պաշտօնեաներին,—եղել է մեր մշտական ձգտումը, ուստի ցաւում ենք, որ անկարող ենք արձագանք տալ Ատրպատականից մեր ականջին հասնող արդար բողոքներին։

—

«Кавказъ» լրագիրը լսել է, որ պ. Աբիսողոմ Յովհաննիսեանցի ռուսերէն-հայերէն բառարանի երկրորդ հատորի տպագրութիւնը արդէն սկսվել է և այդ հատորը, որը յիշեալ բառարանի առաջին հատորից աւելի հաստ կը լինի, լոյս կը տեսնի գալ տարվայ սկզբին։

—

Մարտի 8-ի երաժշտական երեկոյթին Թիֆլիսի Արտիստական ընկերութեան մէջ, ուրիշ երգիչների և երաժիշտների թւում, երգեց և մեր երգիչ պ. Շահլամեանց։ Նա ունեցաւ աջողութիւն և այն անձինք, որոնք լսել են նրան, վկայում են որ նրա ձայնը մի արտակարգ ընդարձակութիւն և ոյժ ունի, միացած առանձին դուրեկան timbre-ի հետ։ Չէ կարելի չը մարգարէանալ պ. Շահլամեանցին մի փայլուն ապագայ և չը խոստովանվել, որ դրանից մշակվելու է մի արտակարգ տէնոր։

—

Կ. ՊՕԼՍԻՑ մեզ գրում են. «Տպագրական տեսչութիւնը արգելեց տեղական հայ լրագիրներին գրել ո և է բան կաթողիկոսի մասին, լինի դա նպաստաւոր թէ աննպաստ»։

—

Մարտի 9-ին, Թիֆլիսի մահմէտականները Նովրուզ-բայրամի տօնի առիթով խմբվելով պարսից հիւպատոսարանի առաջ, շնորհաւորեցին այդ տօնը, որին պարսից հիւպատոսը իր կողմից շնորհաւորութիւններով պատասխանեց։ Ինչպէս յայտնի է, այդ տօնը տեւում է երեք օր։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄ ՏԱՐՐԱԿԱՆ ԵՒ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

—

Փարիզի համաշխարհային ցուցահանդէսի տեղութեան ժամանակ, Ֆրանսիայի մայրաքաղաքում, ինչպէս երևում է հանրապետական կառավարութեան ձեռք առած միջոցներից և հրատարակած հրաւէրներից, ուշադրութեան պէտք է առնվեն բաղմատեսակ կարևոր հարցեր, որոնք ահագին նշանակութիւն ունեն ոչ թէ միայն Ֆրանսիայի, և այլ ամբողջ աշխարհի համար։ Այդ տեսակ հարցերին ենք վերաբերում մենք մամուլի, գրականութեան և կրթութեան հարցերը, որոնք Փարիզում պէտք է ենթարկվեն միջազգային կոնգրէսների քննադատութեան։ Այդ կոնգրէսներին մասնակցելու համար հրաւիրվում են համարեա բոլոր երկիրների ներկայացուցիչները։

Կրթութեան հարցին կը նուիրվի առանձին ուշադրութիւն։ Հարցը աւելի հիմնաւորապէս քննելու համար հանրապետական կառավարութիւնը հրաւիրում է առանձին միջազգային կոնգրէս, որի նպատակը պիտի լինի քննել ժողովրդական կրթութեան վերաբերեալ մի քանի հարցեր։ Կրթութեան վերաբերեալ միջազգային կոնգրէսի նիստերը պիտի սկսվեն օգոստոս ամսին, և կը տևեն մի ամբողջ շաբաթ։

Այդ կոնգրէսի խորհրդածութեանը և քննութեանը պէտք է ենթարկվեն հետևեալ հարցերը.

1) Ինչպէս և ինչ ծրագրով կարելի է արհեստագիտական ուսում աւանդել սկզբնական և միջնակարգ դպրոցներում։ Արհեստագիտական ուսման նիւթը գլխաւորապէս պիտի վերաբերի երկրագործութեան, արուեստներին և առևտրին։

2) Կնոջ գործունէութիւնը տարրական կրթութեան ասպարիզում, իբրև վարժուհու և իբրև տեսչուհու, և

3) Գործնական ուսում աւանդող լրացուցիչ դպրոցների կատարելի դերը և կազմակերպութիւնը։

Մեր ձեռքի տակ առ այժմ չունենք միջազգային կոնգրէսի զբաղմունքների վերաբերեալ մանրամասն տեղեկագիրը, բայց նոյն իսկ հիմնվելով այդ երեք կէտերի վրա, որոնք և կազմելու են ժողովի պարապմունքի գլխաւոր առարկան, կարելի է ասել, որ այդ կոնգրէսը առիթ ունենալով չօշափելու ժամանակակից դպրոցների կազմակերպութեան հարցը, մեծ օգուտ կարող է տալ։

Ժամանակակից դպրոցները, մանաւանդ ժողովրդական սկզբնական դպրոցները, իրանց այժմեան կազմակերպութեամբ և ծրագիրներով կարօտ են չօշափելի վերակազմութեան, և հէնց այդ կէտը աչքի առջև ունենալով՝ Ֆրանսիական կառավարութիւնը անհրաժեշտ է համարել այդ հարցի մշակութեան համար առանձին միջազգային կոնգրէս հրաւիրել։

Այդ հարցերի քննադատութեանը կարելի է մասնակցել և գրաւոր կերպով. գրաւոր կերպով իրանց կարծիք յայտնել ցանկացողները պէտք է մինչև յունիսի 1-ը գրաւոր դիմեն Ֆրանսիական ժողովրդական մինիստրին՝ ուղարկելով իրանց կարծիքները։ Այդ կարծիքները նախ և առաջ կը քննվեն մի առանձին յանձնաժողովում, և դրա հաւանութիւնը գտնելուց յետոյ միայն կարող կը լինեն լոյս տեսնել և ներկայացվել կոնգրէսին։

Ինչպէս երևում է, այդ միջազգային կոնգրէսին շատերն են ցանկութիւն յայտնել մասնակցելու եւրոպական զանազան պետութիւններից,—և դա արդէն մի զօրեղ ապացոյց է, որ տարրական և միջնակարգ դպրոցների վերանորոգութեան և աւելի խելացի կազմակերպութեան հարցը շատ հասունացած է, և մեծ կարևորութիւն է ղգացվում փոփոխելու այժմեան սիստէմներով դոյութիւն ունեցող դպրոցները, որոնք իրանց պրոգրամայով, մատակարարած գիտելիքներով և ընդհանուր ուղղութեամբ շատ և շատ հեռու են կատարեալ լինելուց։

Միջազգային կոնգրէսի պարապման գլխաւոր նպատակը, ինչպէս երևում է հրատարակված տեղեկութիւններից, լինելու է սկզբնական և

Եւ վաշխառուներ....
Զեղծումներ և խնամութիւն,
Մօդային զգեստներ,
Թղթախաղ, անհոգութիւն,
Կլուբ ու կոնցերտներ....

Ահա իմ յիշած ծայրայեղութիւններից և հակասութիւններից բաղկացած Թիֆլիսի հասարակաց կեանքի ընդհանուր, թէև դեռ շատ թոյլ պատկերը....

*
* *

Գարունն եկաւ և ահա գարնան հետ միասին նորից հանդէս է գալիս Ներսիսեան դպրոցի տեսչի մշտական և անվերջանալի հարցը....

«Մեզ հարկաւոր են ազնիւ, բարոյական, ուսումնական մարդիկ, փորձված մանկավարժներ, անձնուէր, շիտակ բնաւորութիւններ» և այլն և այլն, գոռում են մեր յայտնի տեսակի դիմակաւորված մամուլի կեղծաւոր հրապարակախօսները, մեր այդ դառնադեստ գայլերը....

Թողեցէք, թէ Աստուած կը սիրէք, այդ դատարկ, ապարդիւն ֆրազները.... Թէ Ներսիսեան դպրոցի և թէ առհասարակ մեր հասարակական պաշտօնների համար ամենևին հարկաւոր չեն ազնիւ, ուսումնական, բարոյական մարդիկ։ Ընդհակառակ ձեր շրջանում կը մոլորվեն, կը կորչեն, ոչինչ գործ չեն կարողանայ կատարել.... Մեր բոլոր հասարակական պաշտօնների համար, ուրեմն և Ներսիսեան դպրոցի տեսչի պաշտօնի համար՝ հարկաւոր են քաջ, յարմարվող, նենգաւոր, ինտրիգաներ լարել իմացող, բարոյական հաստատ սկզբունքներից զուրկ, ճարպիկ, եղու

միջնակարգ դպրոցներում արհեստագիտական ուսում մտցնելու խնդիրը, մշակելով այդ նպատակին յարմար ծրագրի գլխաւոր կէտերը։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒՅԻՑ

—

Կ. Պոլիս, 28 փետրուարի

Ազգային կէս ժողով մը ունեցանք փետրուար 24-ի ուրբաթ օրը։ Նախորդ նամակներէս միոյն մէջ ըսած եմ թէ Ազգ. Ժողովի անդամների չատերը կամաւ չեն ուզեր ներկայ գտնուիլ Ժողովի նիստերուն, որպէս զի կարելի չըլլայ 71 թիւը լրացնել և Առաջնորդներու ընտրութեան եղանակի փոփոխումի վրայ խօսել։ Այսպէս թէ այնպէս սպասենք կըսուի մինչև մարտ և ապրիլ ամիսներն ալ վերջանան, հիմակուան Քաղ. Ժողովն երթայ, այնուհետև ազատութեամբ կարելի է գործ տեսնել։

Այսպէս հանդիստ կը գնայինք երբ հինգշաբթի օր, ուշ ատեն տեղեկացանք թէ Քաղ. Ժողովի անդամները կարող եղած են մեծամասնութիւն մը պատրաստել, լռիկ մնջիկ գործելով, և յաջորդ օրն այդ մեծամասնութիւնը կարող պիտի լինի վճռական ազդեցութիւն ունենալ Ազգ. Ժողովի քուէն ստանալու այն ծրագրին, որու համեմատ առաջնորդները այսուհետև Պոլսի Պատրիարքարանէն ընտրուելու առաջարկ ներկայացեր է։ Այլ ես ժամանակն ուշ էր հակառակ կուսակցութեան անդամներու հրաւէր ղրկել յաջորդ օրն անպատճառ ներկայանալու։

Ցմրան վերադարձն էր. ձիւնը, մաղթենք թէ վերջինը ըլլայ, կը տեղար երկու օրէ ի վեր, բայց բարակ, անօսր ձիւն մը և յաջորդ առաւօտուն նրբին, սպիտակ շղարշի մը նման ձիւնը ծածկած էր Պոլիսը։ Եւ սակայն ինչ ուրախութիւն. Ժողովատեղին փոխադրուած է վերտին Ղալաթիա. վերջապէս ազատեցանք տաղտկալի ուղևորութիւնէն. երթալ մինչև Գում-Գաբու, անապատ վայր մը, ուր ոչ ճաշարանի հետքը կայ, ոչ ըմպելու համար կանոնաւոր եւրոպական ոճով յարմար վայր մը։ Կորսնցնել մէկ ժամ երթի, մէկ ժամ վերադարձի,—իբր թէ բաւական չըլլար մեր տուներէն մինչև Ղալաթիա կամ Պոլիս իջնելու ժամանակի կորուստը։—Եւ յետոյ այդ ցուրտ եկեղեցիին մէջ ուր հովը ամեն դուռնէ կը փչէ, ուր փայտէ, չոր փայտէ, երկայն սեղաններ կան որոց վրայ նստելու է և խօսողները մտիկ ընելու, ղողալով, ղողղալով, սառելով։ Այդ տառապանքները վերջացած են. Ազգ. Ժողովն այժմ ունի իր յատուկ Ժողովարանը. եկեղեցիէն դուրս պարզ սրահ մը, բայց պալատի մը չափ սիրելի մեզ, վասն զի ազատեցանք Գում-Գաբուէն և ստորտէն։ Վերջապէս Սահմանադրութիւնը հաստատուելէն 28 տարի ետքը Թիւրքիոյ հայոց երեսփոխանները կարող կըլլան իրենց ժողովն ընել այնպիսի տեղ մը, ուր ձիւնի օրն վառարան կայ։ Այո, չնորհքով մեծ վառարան մը, որուն մէջ առատ փայտ մեզ կը փոխադրէր եղեմական դրախտ. մեր մէջէն ծերունիներն, անոնք որ Ազգ. Ժողովի առաջին նիստերէն ի վեր ղողղոցներ են, չէին հաւատար թէ իրանց ժողովատեղին կրակ կայ. կերթային իրենց աչքերովը տեսնել այդ կրակն,—ադդած տաքութիւնը բաւական ապահովութիւն չը համարելով, և քիչ մնաց որ յուզումի, ուրախութեան արցունքներ գային իրենց աչքերէն։ Եւ կըսէին «արդ արձակեա տէր զծառայս քո, զի տեսին աչք մեր.. զկրակ։»

Ինչ չնորհալի այդ սրահը երևցաւ մեր աչքերուն։ Այո, պարզ սև փայտէ աթոռներ, իւրաքանչիւրը 2½ ռուպլի արժողութեամբ, նստարանի տեղ կը ծառայէին երեսփոխաններու. բայց որ գրգանոյշ թիկնաթոռ կարելի էր լաւագոյն հեշտարան մը համարել։ Այո, կը նայենք մեր զգեստներուն և կը տեսնէինք թէ ոչ փոշոտած են, ոչ ալ պատռտած։ Ա՞հ, այն է փոշիի մէջ թաղուած փայտէ երկար նստարանները, պճնազարդեալ սուր գամերով, անյիշատակ ժամանակներէ մնացած, և որք կը պատառէին մեր զգեստներու ամեն անկիւններն։—Ոտքերնուս ներքև կարմիր գորգ մը կայ, արդարև բարակ, թեթև գորգ մը, բայց վրան ազատօրէն կրնայինք կոխել, ազատեցանք այն կեղտոտ, ծակուծուկ փսիաթներէ։ Մի քանի թիկնաթոռներ, ոսկեզօծիկ աթոռ մը Պատրիարքի համար, դիւանի գրասեղան մը, պարզ բայց մաքուր բեմ մը ատենախօսներու համար կամբողջացնէին սենեակի արդուզարդը։ Այլ մոռցանք վարագոյրներն. և մոռնալու իրաւունք ունէինք. այսօր պէտք չունենք, բայց մի քանի շաբաթներ ևս պիտի դիտանք անոնց յարգն, երբ յիշենք թէ քանի և ինը տարի հայոց երեսփոխանք ժողովարանի մէջ արևու ճառագայթներու դէմ իրենց մատները միայն իրը լուսամփոփ (abat-jour) կը գործածէին։ Իսկ այժմ երփներանգ վայագոյրներ պիտի թոյլատրեն մանաւանդ ատենաբաններուն պերճախօս ձևերով զօրացնել իրենց պերճախօսական լեզուն։—Փոքրիկ վանդակ մ'ալ կանջատէ ունկնդիր ժողովուրդը «ատենակալ հայրերէն»։

Ժողովի բացումն հաստատված է կէս օրէն մի ժամ վերջ. արդէն Սիմոն Պէյ և Նուբեան էֆէնդի յառաջապահներ են այսօր, ամենէն կանուխ ներկայ գտնուողներէն են, նշան փոթորկալից օրուան մը։ Հետզհետէ կուգան երեսփոխանք, բայց հաղիւ թէ հինգ երեսփոխանք կան, կուսակիցք Քաղ. Ժողովոյ ծրագրին առաջնորդական փոփոխումի համար։ Հակառակորդք սրտի տրոփումով կը սպասեն. ամեն մէկ երեսփոխան որ ներս կը մտնէ իրենց կողմն է. արդէն քառասունէն աւելի երեսփոխանք կան և աւելի քան երեսուն իրենց հակառակորդ են Քաղ. Ժողովի։

Ատեանը կը բացուի ժամը մէկ ու կէսի մօտ. կատենապետէ պ. Քրիստոստուր Ղազարոսեան, երկրորդ ատենապետն. առաջինը հիւանդ է, բացակայ է։ Ոմանք սուր դիտողութիւն մը կընեն. ահաւասիկ ծերունի մը որ ուսուցիչ է. հապիւ թէ ամիսը 20 (քսան) ռուպլի կը ստանայ Գարակեօմրիւկի վարժարանէն, և սակայն կը նախագահէ հարուստներու, էֆէնդիներու, պէյերու.—ռամկավարութեան վերջին խօսքն է այս. ինչպէս միւսները դիժ չըլլան։

Ժողովը կը զբաղի մի քանի խնդիրներով զոր կարգադրելէ վերջ կանցնի օրակարգի. այս միջոցին Սիմոն պէյ և Նուբեան էֆէնդի դուրս կելլեն և կերթան։ Կերպով մը բարեբաղդութիւն պէտք է համարել, առանց այս բացակայութեան դուցէ շատ ծանր և փոթորկալից օր մը անցնէինք։ Եօթանասուն և մէկ հոգի ներկայ չեն, ուրեմն վերջնական որոշում տալ կարելի չէ. բայց ներելի է խնդիրներու վրայ խօսել։ Օրակարգին մէջ երեք խնդիրներ նշանակուած են. համարատուութիւն նախորդ Քաղ. Ժողովի. համարատուութիւն նախորդ Կրօ. Ժողովի. Առաջնորդական ընտրութեան եղանակի փոփոխում։ Ժողովն այսօր առաջին խնդրովը կուզէ զբաղիլ, Նուբեան էֆէնդիի համարատուութեամբ։

Այս խօսքը մի քիչ չփոթութիւն պիտի պատճառէ մեր ընթերցողներուն։ Ի՞նչ ըսել է Նուբեան էֆէնդիի համարատուութիւն։ Մեր Սահմանադրութիւնը կը տրամադրէ որ Քաղաքական ու Կրօնական Ժողովներն երբ իրենց պաշտօնավարութիւնն աւարտեն, իրենց գործերու տեղեկագիրն ներկայեն Ազգ. Ժողովի. օրէնքը լաւ է, բայց եթէ ամեն լաւ օրէնքներ գործադրուէին աշխարհս երջանկութեան դրախտ մը կը դառնար։ Սահմանադրութեան հաստատութիւնէ ի վեր առաջին անգամն է որ Քաղ. Ժողով մը իր այս պարտականութիւնը կը կատարէ և այդ Քաղ. Ժողովն ալ Նուբեան էֆէնդիի ատենապետած Քաղ. Ժողովն է.—համարձակութիւն մը որ քաջութիւն է։ Այս հաշուէտուութիւնը նորութիւն է. երկու տարի է որ Նուբեան էֆէնդի պաշտօնը թողած է. երկու տարիի մէջ ինչ փոփոխութիւն, և սակայն այժմ է հասած ժամանակը. տաղնապալից օրեր, կնճռոտ խնդիրներ ներելի չըրին Ազգ. Ժողովին զբաղիլ այս համարատուութեան խնդրով։ Օրն հասած էր. Ցանձնաժողովը չնորհակալութեան քուէ կառաջարկէր բայց Ժողովը այս առաջարկը չընդունեց, և ոչ ալ հակառակն ըրաւ։ Նախորդ Քաղ. Ժողովէն ոչ ոք ներկայ էր. պէտք էր անոնց ներկայութիւնն։ Ուրեմն միայն քննադատութիւնները լսուեցան, որոշուելով որ ուրբ օրէն նիստ գումարուի և նախորդ Քաղ. Ժողովն իր բացատրութիւններն տայ, եթէ ունի։

Պէտք է խոստովանիլ թէ նիստը չատ կանոնաւոր անցաւ. ամեն խօսող երեսփոխանք լրջութեամբ, առանց կրքի կը յայտնէին իրենց կարծիքներն։ Սակայն դիմադրութիւնը կարելի էր բաժնել երկու կարգի. մի կարգին մէջն անոնք են որ ամեն բան դէշ կը գտնէին նախորդ Քաղ. Ժողովի գործերէն, իսկ միւս կարգին մէջ են անոնք որ կուզեն ինչ որ լաւ է լաւ ըսել, ինչ որ վատ է վատ։

Բայց արի տես որ ճաշակները կը տարբերին. ինչ որ ոմանք լաւ կը գտնէին, ուրիշները համակարծիք չէին իրենց. և ինչ որ վատ կը համարուէր ոմանց կողմանէ, այլք բոլորովին տարբեր կը մտածէին այդ մասին։ Բայց վերջապէս քննադատելի կէտերը չատ էին, ընդհանրապէս զայրոյթ մը կար ընդդէմ այն ձգտումին, որով Քաղ. Ժողովը իրեն կը յատկացնէր Ազգ. Ժողովի իրաւասութեան վերաբերեալ կէտերը։

Սակայն Քաղ. Ժողովի մը համարատուութեան պարտականութիւնը ակներև եղաւ այն օրն, և Ազգ. Ժողովի ազատ քննադատութեան իրաւունքն յաղթանակեց։

Երեսփոխան մը նոյն օրն հետևեալ կերպով ամփոփեց Ազգ. Ժողովի վիճաբանութիւններու ոգին։

«Բայց այս յայտնած կարծիքներէս չը հետևիր անշուշտ որ Նախորդ Քաղաքական Ժողովոյ ջերմ բարեկամներէն համարուիմ։ Երկու տարի անցաւ, տեսաք, յորմէ հետէ այդ Քաղ. Ժողովը դադրած է պաշտօնավարութենէ և սակայն ժամանակը տակաւին կարող չէ եղած տկարացնել մեր սրտերուն մէջ յիշատակն այն յուզեալ օրերուն զոր անցուցինք այդ Քաղ. Ժողովոյ օրով. ուրքան ինդիրներ. տեղ մը Պոլսոյ եպիսկոպոսն էր որ այդ Քաղ. Ժողովոյ պաշտպանութիւնը վայելելու բաղդն ունէր, անդին Պետրոս վարդապետ մ'էր որ բաղդակից էր այդ Պոլսոյ եպիսկոպոսին, հոս հրատապ խնդիրներ որոց միոյն մէջ նոյն ինքն Պէրպէրեան էֆէնդի այնքան պերճախօս ախոյեան հանդիսացաւ ընդդէմ Քաղ. Ժողովոյ։ Միթէ այդ Քաղ. Ժողովոյ օրովը չէր որ կրօնքն իսկ գործիք եղաւ անձնական կիրքերու, շահերու, և միջնադարեան ուղղութեամբ անիրաւացաւ կրօնքն. այս անիրաւութեան մէջ մեծապէս պատասխանատու է նաև նախկին Կրօնական Ժողովն. այդ մասին պիտի խօսինք երբ այդ Կրօն. Ժողովոյ համարատուութեան խնդիրը ներկայանայ։ Վերջապէս այդ և նմանօրինակ յիշատակներ որք կենդանի են մեր մտքին մէջ, թոյլ չեն տար մեզ բոլորովին երախտապարտ մնալ նախորդ Քաղ. Ժողովոյ։

«Բայց պէտք է խոստովանիլ թէ այդ Քաղ. Ժողովոյ մէջ անհամաձայնութիւնը կատարեալ էր և անդամոց մի մասն, ի մօտոյ տեղեակ եմ, բնաւ համակարծիք չէին չատ մը խնդիրներու տրուած ուղղութեան։ Մինչև վերջ կընդդիմադրէին և եթէ չը հրաժարեցան կամ աւելի զօրեղ դիմադրութիւն չըրին, արդարացի պատճառներ ունէին. և ամենքս ալ այդ պատճառները կարող ենք ըմբռնել, առանց անոնց վրայ չատ ծանրանալու։

«Ուրեմն կը տեսնենք թէ նախ կարծեաց բաժանում կայ թէ նախկին Քաղ. Ժողովոյ որ գործերն արժանի են չնորհակալութեան, որ գործերն այդ բաղդը պիտի չունենան։ Յետոյ պէտք է բաժանում ընել նոյն իսկ Քաղ. Ժողովոյ անդամներուն մէջ։ Այս ամենուն մէջ արդար ուղղութեան հետևիլ չատ դժուար է, ուրեմն լաւագոյն է որ Ժողովն իր տպաւորութիւններուն ներքև մնայ. յայտնուած թեր ու դեմ կարծիքներն արձանագրուին և առաջարկուած չնորհակալութեան քուէի խնդիրն ետ մնայ»։

Իսկ Ստեփան բաշա Ասլանեան փակեց վիճաբանութիւններն հետևեալ առաջարկով.

«Ազգային Ժողովը կառկախէ Իր տալիք որոշումն ի մասին համարատուութեան նախորդ վարչութեան, մինչև որ լսէ այդ վարչութեան բացատրութիւնները»։

Ժողովականք զոհ ցրուեցան. նստի ընդարձակ և ճշգրիտ նկարագիրն յաջորդ օրն «Արեւելք» հրատարակեց. «զոհունակութիւն ընդհանուր է։ Այդ ընդարձակ նկարագիրն կը ղրկեմ «Մշակի», եթէ մէջէն ամփոփում մը ընել կարելի ըլլայ անշուշտ խմբագրութիւնն կանէ։ «Արեւելքի» այդ նկարագիրն հաղիւ թէ սղմուի «Մշակի» մէկ ամբողջ թիւին մէջ։

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Օմալեան դուքսը, ինչպէս գրում են Փարիզից, վերադառնալով Ֆրանսիա, թշնամական զիրք կը բռնի դէպի գեներալ Բուլանժէ։

—Հռոմից հեռագրում են, որ Կրիսպի աշխատում է վերականգնել Ֆրանսիայի հետ առևտրական դադարեցրած յարաբերութիւնները՝ իր վարկը բարձրացնելու նպատակով։

—Փարիզից հեռագրում են. «Օմալեան դուքսը Փարիզ վերադառնալով, այցելեց նախագահ Կարնոին և ասեց նրան հետևեալ խօսքերը. «ոտք դընելով հայրենի հողի վրա, ես ամենից առաջ հարկաւոր համարեցի չնորհակալութիւն յայտնել ձեզ, իբրև արտայայտութիւն իմ դէպի ձեր կառավարութիւնը ունեցած յարգանքի»։ Դրանից յետոյ Օմալեան դուքսը ներկայ եղաւ Ֆրանսիական ճեմարանի նիստին»։

—Բելգրադից հեռագրում են, որ մի կուսակցութեան ձեռքով ամբողջ Սերբիայում տարածվում են Նատալիա թագուհու պատկերները։

—Աւստրիական պատգամաւորների ժողովում պատասխանելով եղած հարցապնդումներին, կոմս Տաաֆէ ի միջի այլոց ասեց հետևեալը, թէ գերմանացիները, թէ չէխերը և թէ լեհացիները կարող են զարգացնել իրանց ազգութիւնը ազատ կերպով, բայց չը դուրս գալով Աւստրիայի ընդհանուր շահերի շրջանից, որոնք և կազմում են այդ բոլոր ազգերին միացեալ օղակը։ Այդ խօսքերը ժողովի մէջ առաջ բերեցին հաւանութեան նշաններ։

—Հեռագիրը հաղորդում, որ Լէօն XIII Հռոմի պապը ծանր կերպով հիւանդ է։

—Բերլինի «Volks-Zeitung» լրագրի խմբագրատանը մարտի 1-ին (13-ին) կատարվել է ոստիկանական խուզարկութիւն։

—«Corresp. de l'Est» հաստատում է այն լուրը, որ Նատալիա թագուհին մի քանի անգամ տարվայ ընթացքում տեսակցութիւն կունենայ իր որդու, Աղեքսանդր թագաւորի հետ, Եալտայում։

—Լուր կայ, որ Սերբիայի խնամակալները վճռել են յատկացնել Նատալիա թագուհուն մայր-թագուհու տիտղոսը։

—Սերբիայի նախկին թագաւոր Միլան, գահից հրաժարվելով, դիտաւորութիւն ունի այժմ զբաղվել գրական աշխատանքներով։ Նա միտք ունի, ի միջի այլոց գրել իր թագաւորութեան պատմութիւնը։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Բերլինի պատմական ընկերութեան մէջ (Geschichts-Verein), որտեղ իրանց զեկուցումները կարդում էին այնպիսի հռչակաւոր պատմաբաններ, ինչպէս Բանկէ, Մոմզէն, Տրէյչկէ, Բէպպէլ և այլն, այս օրերս առաջին անգամ, մեծ դժուարութիւններ յաղթելուց յետոյ, կարդաց իր պատմաբանական զեկուցումը՝ մի կին, Եղիսաբէթ Լէմկէ։ Նրա ուսումնական զեկուցումը կրում էր հետևեալ վերնագիրը «Արևելեան Պրուսիայի ազգաբնակութեան պատմական բարք ու վարքը»։ Երկար ժամանակ ընկերութեան անդամները չէին ուզում թոյլ տալ որ մի կին կանդնի ուսումնական ընկերութեան ամբիոնի վրա և դասախօսէ, բայց վերջը թոյլ տուեցին։ Երբ երիտասարդ գերմանուհին բարձրացաւ ամբիոն, ուսումնական լսողները թերահաւատութեամբ էին վերաբերվում դէպի այդ համարձակ կնոջ հմտութիւնները, բայց երբ Եղիսաբէթ Լէմկէ սկսեց խօսել, ուսումնական ամենախիստ դատաւորները հետզհետէ սկսեցին հետաքրքրվել նրա լուրջ և ճշմարիտ ուսումնական զեկուցումով և վերջը վարձատրեցին տիկնոջ անկեղծ և բուռն ծափահարութիւններով։ Երիտասարդ գերմանուհու քաջ վարմունքը, նրա ուսումնական հմտութիւնները, նրա գիտնական զարգացումը և ուսումնական ընկերութեան մէջ նրա տարած փայլուն յաղթութիւնը՝ սակաւ չի նպաստի Գերմանիայում կանանց մտաւոր էմանսիպացիայի գործի աջողութեան։

* * *

Ունգարիայի Մէտրովիա քաղաքի դատարանում չուտով պիտի քննվի մի գործ, որը ահագին աղմուկ է հանել ամբողջ երկրում. կը դատվեն մի քանի տիկիններ, որոնք թունաւորել են թէ իրանց ամուսիններին և թէ սիրեկաններին, նրանցից ազատվելու նպատակով։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 մարտի։ Նոցա Կայսերական Մեծութիւնները Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհին Թագաժառանգի և Օգոստափառ երեխաների հետ բարեհաճեցին տեղափոխվել Գատչինա։

ՕԴԷՍԱ, 9 մարտի։ Հարաւ-արևմտեան երկաթուղիների ընկերութիւնը ձեռնարկում է էլէվատորի շինութեան՝ 500,000 չետվերտ հացատիկի համար, «Хлѣбный городокъ» արուարձանում, Տիրոսպոլեան ուղեփակի մօտ։ Արժողութիւնը 350,000 ռուբլի է։

ԲՈՒԴԱ-ՊԷՇՏ, 9 մարտի։ Անցեալ օրը պատգամաւորների ժողովի նիստից յետոյ, մի ուսանող, 70-ամեայ ծերունի պատգամաւոր Իվանկոյին մամլիկ անուանեց։ Պատգամաւոր Բագոնչի ուզեց հրել ուսանողին, բայց նրանից ստացաւ մի սաստիկ ապտակ. այն ժամանակ Բագոնչի հանեց ա-

տրճանակը, կրակեց ուսանողի ոտներին և նրան վիրաւորեց։ Այդ միջնադէպը քաղաքում առաջ բերեց մեծ յուզմունք։ Երէկ տեղի ունեցան մի քանի ցոյցեր և ընդհարումներ ոստիկանութեան հետ. պարլամէնտի առաջ, մինչև նիստի սկսվելը, խմբվեց մեծ բազմութիւն, որը դիմաւորեց Տիսային շվոցներով «կորչի Տիսա» գոչելով։ Պարլամէնտական յանձնաժողովին յանձնարարված է քննութիւն անել այդ միջնադէպքի մասին։ Զինուորական մեծ պատրաստութիւններ են տեսնված։ Ասում են, որ Տիսայի դրութիւնը վերջնականապէս խախտված է, և որ կայսրը այս շաբաթ Պէշտից դուրս կը գնայ։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ, 9 մարտի։ Հայր Պախի ասում է, որ դժբաղդ դէպքը տեղի ունեցաւ ոչ թէ իտալական ինտրիգների պատճառով, ինչպէս շատերը կարծում են, այլ այն պատճառով, որ ֆրանսիական հոգևորականութիւնը հիմնել է Օբոկում երկու առաջնակարգ վանք. կաթոլիկ հոգևորականները հէնց Աշինովի խմբի Օբոկ գալու առաջին օրից նրանց թշնամաբար ընդունեցին, որտեղ կարելի էր, նրանց ճնշումի էին, որպէս զի արգելք լինեն տեղացիների մէջ ուղղափառ եկեղեցու հիմնարկութեան. տեղական կաթոլիկ հոգևորականութիւնը գործ էր դնում իր բոլոր ջանքերը, որպէս զի ռուսներին այստեղից ամօթալի կերպով դուրս քշի, և իր այդ նպատակին հասաւ էլ, օգուտ քաղելով նրանց անպաշտպան լինելուց։ Ասում են, որ Աշինովից պահանջել են աւելորդ զէնքերը տալ, մինչդեռ զէնքի պակասութիւն էր զգացվում։ Աշինով այդ մասին յայտնեց ֆրանսիական իշխանութեանը, և դրա փոխարէն ֆրանսիացիները պահանջեցին, որ ռուսները հեռանան՝ այն հիման վրա, որ Սեդալլօ հին ամրոցը, որը գրաւել էին ռուսները, շինված է այն հողի վրա, որը այժմ գտնվում է ֆրանսիական հովանաւորութեան ներքոյ, սակայն այդ պահանջները անհիմն էին, որովհետև ֆրանսիական իշխանութիւնը փորձեց տիրել այդ հողին, բայց այդ հողը Թաջուրայի սուլթանը զիջել էր Աշինովին։ «Ես կարող էի, ասում է հայր Պախի, այդ բոլորը հաստատել, բայց ներկայումս վաղաժամ եմ համարում հրապարակ դուրս բերել ինձ մօտ եղած տեղեկութիւնները»։ Ֆրանսիական իշխանութիւնը չէ նախազգուշացրել Աշինովին, որ եթէ նա չի հպատակվի, այն ժամանակ թնդանօթներ կարձակեն։ Թնդանօթներ արձակեցին այն ժամանակ, երբ ամենքը քնած էին։

ԶԱՐԶՈՒ, 9 մարտի։ Վերջին տեղեկութիւններին նայելով, Աբդուրահման-խանը գտնվում է Մազարի-Շերիֆում, բայց ոչինչ բանի չէ ձեռնարկում։ Հօլամ-Հայդարը զրկվել է էմիրի բարեհաճ ուշադրութիւնից. էմիրը կասկածում է, որ նա մասնակից է եղել այն փորձին, որ գործել է մի զինուոր էմիրի կեանքի դէմ յունվարի 2-ին. այդ պատճառով Հօլամ-Հայդարին Իսհակ-խանի փոխարէն նշանակելը տեղի չի ունենայ։

ՕԴԵՍԱ, 9 մարտի։ Այսօր Աշինովի ամբողջ խմբի անդամները, որոնք հրաժարվում էին իրանց հաշով հայրենիք վերադառնալ, ուղարկվեցան իրանց ընակութեան տեղերը էտապով։

ԲՈՒԴԱ-ՊԵՇՏ, 9 մարտի։ Երէկ, երբ Տիսա պարլամենտի նիստից վերադառնում էր տուն ծածկած կառքով, ամբոխը կառքի վրա քարեր արձակեց։ Տիսա անվնաս մնաց։ Կէսօրից յետոյ տեղի ունեցան արիւնհեղ ընդհարումներ բազմարուեստեան ինստիտուտում։ Երեկոյեան բազմաթիւ զօրքը ցրվեց խմբված ժողովրդին և մաքրեց փողոցները. այդ բանին նպաստեց յորդ անձրևը։ Կայսրը և կայսրուհին մեծ դժգոհութիւն են յայտնում փողոցային արիւնհեղ տեսարանների պատճառով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 մարտի։ Ապրիլի 1-ից պատուիրած նամակի և դրամական ծրարի իւրաքանչիւր 15 գրամի համար կը վերցնվի՝ 10 կ., ծախքը չը վճարված ստացվող փակ նամակի 15 գրամի համար՝ 20 կ., բաց նամակի համար և բաց նամակի իւրաքանչիւր մասի համար առաջուց վճարված պատասխանով վերցվում է 4 կ., 50 գրամ կշիռ ունեցող բանդէրոլով ուղարկվող բանի համար վերցվում է 2 կոպ., գործնական թղթերի համար վճարի ամենատուրին չափը 10 կ. է որոշվում, իսկ ապրանքների նմուշների համար՝ 4 կ., լիապէս ծախքը չը վճարած հասարակ նամակի կամ հասարակ բանդէրոլով ուղարկվող զրութեան համար վճարը կրկնապատիկ է լինելու։ Դրամական ծրարի համար վերցվում է 10 կ., ապահովեալ թղթակցութիւն ստանալու մասին հաղորդած տեղեկութեան համար վերցվում է 10 կ.։ Արտասահմանեան նոր տականեր կը գործադրվեն ասիական Ռուսաստանում «Օրէնքների ժողովածուի» № 22 ստանալուց մի ամսից յետոյ։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ, 10 մարտի։ Աշինովի ուղեկիցները ափ են իջեցրած և տեղաւորված են քաղաքային զումայի և պոլիցիայի շինութիւններում. հիւանդները քաղաքային հիւանդանոցն են ուղարկված։ Աշինովին «Ցուապսէ» շոգենաւից մարտի 8-ից տեղափոխեցին Վեստչէլի հիւրանոցը, ուր առաջուց իջած են նրա կինը և հոգևորականութիւնը։ Կատարեալ ազատութիւն միայն հոգևորականութիւնն է վայելում։

ՓԱՐԻԶ, 10 մարտի։ Պատգամաւորների ժողովում Լօր ասեց, որ Բոտչիլդի տունն է պղնձի կրիզիսի պատճառը։ Բոտչիլդ դլուխն է միջազգային այն դաւադրութեան, որը ուղղված է ֆրանսիական չուկայի դէմ։ Հռետորը պահանջեց, որ այդ գործը քննութեան ենթարկվի։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

—

ԳԱՆՁԱԿ. Պ. Տ. Ն. Ուղարկեցինք ձեզ Գր. Արծրունու գերմաներէն բրօշիւրը, որը դուք պահանջեցիք։

ԹԻՖԼԻՍ. Ա. Փ. Ձեր երազը շատ հետաքրքիր է, բայց տպել չենք կարող։ Սպասենք մինչև իրագործվի։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Վաղը, կիրակի, ամսիս 12-ին կը կատարվի հանդուցեալ ՊԵՏՐՈՍ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ՇԱՆՇԵԱՆԻ յուղարկաւորութեան հանդէսը։ Հանդուցեալի յիշատակը յարգող ազգականները, բարեկամները և ծանօթները հրաւիրվում են ներկայ գտնվելու յուղարկաւորութեան առաւօտեան ժամը 10-ին։ Հանդուցեալի մարմինը դուրս կը տանվի արժ. հայր Սահակ քահանայ Սահակեանի բնակարանից, Малая Орбеліанская ул., № 26, դէպի Վանքի մայր-եկեղեցին։ Ամբիծքը կը կատարվի այսօր, շաբաթ երեկոյեան, ժամը 7-ին։ 1—1

ՀՈԳԵՒՈՐ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ տնօրէնութեան համաձայն սրանով կրկին անգամ հրաւիրում եմ Հալաբարի սուրբ Կարապետ եկեղեցու մեծապատիւ ծխական ժողովուրդներին շնորհ բերել նոյն եկեղեցու ուսումնարանի դահլիճը կիրակի, մարտի 12-ին, առաւօտեան ժամը 12-ին, կատարելու ս. Կարապետ եկեղեցու հաշւատեսների և տղայոց դպրոցի հոգաբարձուների ընտրութիւնը ս. պատարագից յետոյ։

Վերատեսուչ բարեկարգութեան եկեղեցիների հայոց Հալաբարի՝ Աշոտ քահանայ Թէմուրազեանց։ 1—1

ՉԵՐՄԱՄԻ ՍԵՐՄ

Ֆրանսիայի դեղին և սպիտակ շերամի ամենալաւ ցեղից պատրաստած ունեմ, Պաստեորի մեթոդով։ Ֆունտը 60 ռուբլի, 5 մնխալը՝ 3 ռուբլի 50 կոպ., ճանապարհածախսով։

Հասցէն՝ Туапсе, Черноморскій округъ, Варваринская Сельско-Хозяйственная школа, Леону Степанянцу. 9—15

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԷԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՕՐԻԱՅԻ հրամանի համաձայն ամսիս 12-ին, կիրակի օրը, ժամը 12½-ին սուրբ պատարագից յետոյ, կատարվելու է Զրկինեանց եկեղեցու նոր երեցփոխանի ընտրութիւնը. սուտի յիշեալ եկեղեցու մեծապատիւ ծխականները հրաւիրվում են նշանակած օրը մասնակցելու յիշեալ ընտրութեան, որը տեղի կունենայ նոյն եկեղեցու գաւթում։

Վերատեսուչ բարեկարգութեան եկեղեցեաց Թիֆլիսի՝ Յովհաննէս քահանայ Մարտիրոսեան։ 2—2

Լոյս տեսաւ և վաճառվում է բոլոր հայ գրավաճառների մօտ Թիֆլիսում

"ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ ԳԱՒԱՌԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ"

(Գաւառական պատկերներ)։ Գրեց Ալէքսանդր Արարատեանց։
Գինն է 70 կոպէկ։
Գիրքը հրատարակված է հանդուցեալ հեղինակի պատկերով։ 9—10

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ԳԵՐՄԱՆԵՐԷՆ-ՀԱՅԵՐԷՆ

ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԳԻՐՔ

Աշխատասիրեց Հ. Աւետիք վ. Կոյլաւեան, Վիէննա, 1889, Մխիթարեան տպարան

Նոյն գերմաներէն-հայերէն (աշխարհաբար) բառագիրքն (104 թերթ=1667 երես) ունի սկիզբն համառօտ գերմաներէն քերականութիւն. կը բովանդակէ գերմաներէն լեզուի ամեն գործածական գիտական և ընտանեկան բառերն ու բացատրութիւններն, բառերու ասութիւններն ու առումներն, և այլն։ Տպված է ազնիւ թղթի վրա, թղթակազմ կամ կիսակաշի արժէքն է 10 ռուբլի, կիսակաշի 11 ռուբլի, ճանապարհի ծախքը 80 կոպէկ գնողին վրա է։ Շատ օրինակ գնողին քանակութեան համեմատ զիջում կը լինի։ Ցանկացողները կարող են ստանալ՝ գինն ու ճանապարհի ծախսը ուղարկելով հետևեալ հասցէին. Въ Вѣну. (Австрія) Mechitharisten-Congregation Wien Mechitharistengasse 4. 2—5

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

„ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԷՔԻԱԹՆԵՐԻ"

Հինգերորդ գիրքը։

Վաճառվում է Թիֆլիսի հայ գրավաճառանոցներում։ Գինն է 50 կոպ.

Շուտով մամուլի տակ կը մտնի մեր ժողովածուի 7-րդ գիրքը։ Գաւառական ուսուցիչներից և առհասարակ ձեռնհաս անձանց խնդրում ենք ուղարկել մեզ հետևեալ նիւթերը.—հեքիաթներ, ժողովրդական երգեր, աղօթքներ, առածներ, հանելուկներ, անէծքներ, օրհնութիւններ, երդումներ, սրախօսութիւններ, փազաքչական խօսքեր, ջան-գիւղումներ, մանկական խաղեր, և այլն։ Նաև գաւառական բառեր, ոճեր և դարձուածներ։ Ամեն տեսակ աւանդութիւն պէտք է գրել բուն տեղական բարբառով (գժուարիմաց բառերի բացատրութեամբ)։ Մեզ բաւականաչափ նիւթ ուղարկողը կը ստանայ մեր հրատարակած գրքերից մի մի օրինակ։ Մեր հասցէն՝ Тифлисъ, Т. Навасардянцъ, редакція журн. «Мурчъ»։ 2—4 (2)

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ

Ուրբաթ, 17/29 մարտի, ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգենաւ TIGRE (ՏԻԳՐ), նաւապետ FABRE (ՖԱԲՐ), մանելով Ի. Պօլիս, Պօրտ-Լահօս և Լակավաչ։

Ագենտները՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Գ. ԷՍՍԷՆԺԷՐ, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԷՈՐԳ ՀԵՋՈՒԲԵԱՆՑ։ 2—2

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—9—11 ժ. վիրաբուժական, նաև ատամնացաւի, սիֆիլիսի և աչքի ց.
ՐՈՒԴԿՕՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—11½—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ԲԵՆԿԼԵՎՍԿԻ—11—12 ժ. ականջի, կոկորդի, քթի ց. և սիֆիլիսի։
ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 ժ. երեքշաբթի, ուրբաթ և կիւրակի կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիւրակի։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

ԳԱԴՕՄՍԿԻ—4½—5½ ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.
ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—5½—6½ ժ.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—5½—6½ ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էլեկտրոտերապիա)։
Հիւանդանոցումն է մանկաբարձուհի Մօղեր։

Վճար—50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ։

Հիւանդանոցի վերատեսուչ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Մարիամեան-Յովնանեան ուսումնարանի հոգաբարձական խորհրդարանում ամուրդով պիտի տրվի Անանեան քարվանսարան երեք տարի ժամանակով, առաջիկայ ապրիլի 15-ին։ Ամուրդին մասնակցել ցանկացողները հրաւիրվում են գալ Մ—6 ուսումնարանը, ներկայ մարտի 30-ին, հինգշաբթի, երեկոյեան 7 ժամին։ 2—4

Дозволено цензурою, Тифлисъ 10 Марта 1889 г.

Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.